

10850



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Երզնկա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան

« 09 » 10 2024թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 208 - 24

Նախաձեռնող՝

«ԲԱՐԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿ» ՍՊԸ

ք. Երևան, Արաբկիր, Քոչարի և Ռիզայի փողոցների հատման կետ

Գործունեությունը՝

Արաբկիր վարչական շրջանի Հր. Քոչարի փողոց

139 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի

շենքի կառուցում

ք. Երևան

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 208 - 24

«09» հոկտեմբեր 2024թ.

**Արաբկիր վարչական շրջանի Հր. Քոչարի փողոց 139 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

|                        |  |
|------------------------|--|
| Նախաձեռնող՝            | «ԲԱՐԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿ» ՍՊԸ   |
| Փաստաթղթի տեսակը՝      | Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ |
| Գործունեության տեսակը՝ | «Բ» կատեգորիա  |
| Գտնվելու վայրը՝        | ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան   |

**Ներածական մաս.** «ԲԱՐԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿ» ՍՊԸ-ն նախատեսում է Արաբկիր վարչական շրջանի Հր. Քոչարի փողոց 139 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցման աշխատանքներ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման կադաստրային ծածկագրով N01-003-230-011 վկայականը, Երևանի համայնքապետարանի կողմից տրված N01/18-07/1-Դ-127910-751 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Հողամասի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

**Նկարագրական մաս.** Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Արաբկիր վարչական շրջանի Հր. Քոչարի փողոցի 139 հասցեում:

Գեոմորֆոլոգիական տեսակետից տեղամասը տեղադրված է Քանաքեռ Արաբկիր հրաբխային սարավանդի սահմաններում, մակերեսը հարթ է, աննշան թերթիկային





դեպի հարավ-արևմուտք: Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 1141.8-1143-0 մետրի սահմաններում:

Կառուցապատման համար նախատեսված հողամասն ունի միջին բարդության ռելիեֆ, ստորին և վերին նիշերի տարբերությունը մոտ 1-1,5 մետր է:

Նախատեսվող բնակելի շենքի հեռավորությունը հարևան բնակելի շենքերից կազմում է 20 մ և ավել:

Համաձայն գնահատման հաշվետվության տարածքում մինչև 30 մ խորությամբ ստորերկրյա ջրեր չեն հայտնաբերվել: Վտանգավոր ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ և պրոցեսներ (կարստ, սողանք, քարաթափություն, փլուզում) տարածքում բացակայում են, Կարմիր գրքերում գրանցված կենդանատեսակներ և բուսատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել:

Նախկինում ստացված քաղաքաշինական փաստաթղթերի հիման վրա գործունեության տարածքում հողային աշխատանքներն իրականացվել են ամբողջ ծավալով, իրականացվել է նաև փոքր ծավալով հիմքերի բետոնացման աշխատանքներ:

Տարածքում առկա է պահեստ 59,5 քմ և օժանդակ շինություն՝ 11,7 քմ մակերեսով, որոնք կօգտագործվեն շինարարության ընթացքում, որից հետո կապամոնտաժվեն:

Նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի շենքը կունենա 25 վերգետնյա և 4 ստորգետնյա հարկեր: Վերգետնյա՝ 1-ից 3-րդ հարկերում նախատեսվում է հասարակական տարածքներ, 4-ից 23-րդ հարկերում՝ 226 բնակարաններ, 24-ից 25-րդ հարկերում՝ հասարակական տարածքներ, 25-րդ հարկում նաև լողավազան, ինչպես նաև մարզասրահներ, շոգեբաղնիքներ և մերսման սրահներ, տանիք բարձրանալու համար հակահրդեհային դռներով ինքնափակվող համակարգով ուղղաձիգ աստիճաններ:

Շենքի 4 ստորգետնյա հարկերում նախատեսվում է 202 ավտոկայանատեղիներ, որը բաղկացած կլինի երկու հրդեհային հատվածներից, որոնք միմյանցից բաժանված կլինեն հակահրդեհային, հրդեհի ժամանակ իքնաշխատ համակարգով փակվող դարպասներով: Ավտոկայանատեղում նախատեսվում են մեխանիկական դրոմամբ ներածման և արտածման օդափոխության համակարգեր: Ստորգետնյա ավտոկայանատեղերում յուրաքանչյուր հարկի համար նախատեսվում է առանձին՝ վնասակար գազարտանետումների նոսրացման և հեռացման համար օդափոխման համակարգ: Ավտոկայանատեղին կլինի երկակի նշանակության, որն անհրաժեշտության դեպքում կարող է ծառայել որպես պարզագույն թաքստոց: Այս հարկում նախատեսված են սանհանգույցներ պատսպարանից օգտվողների համար, այդ թվում նաև մեկ սանհանգույց սահմանափակ կարողությամբ մարդկանց համար: Տվյալ տարածքը կապահովի օդափոխությամբ և վթարային լուսավորությամբ:

Նախատեսված է անհատական օդափոխման և ջեռուցման համակարգեր, որոնց արտաքին բլոկները նախատեսվում է քողարկել հատուկ դրանց համար նախատեսված խորշերում և համապատասխան ձայնամեկուսիչ նյութերի օգտագործմամբ նախատեսվում է ապահովել աղմուկի ցածր մակարդակ:

Բնակարանների սանհանգույցներից արտածման և խոհանոցների համար նախատեսված են ցինկապատ պողպատից օդատարեր, յուրաքանչյուր բնակարանի սանհանգույցում՝ առաստաղային օդամղիչ:

Շենքի բնակելի մասի միջանցքներից և ավտոկայանատեղերից կիրականացվի ծխահեռացում, որոնց օդամուղերը տեղակայված կլինեն տանիքի վրա:





Հրդեհի ժամանակ վերելակների հորաններում և ավտոկայանատեղիի վերելակների հորանի և աստիճանավանդակի նախասրահներում կնախատեսվեն դիմհարման համակարգեր:

Բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի էներգախնայողության և էներգաարդյունավետության համար նախատեսվում է իրականացնել օդափոխվող ֆասադային համակարգ, որը ներառում է ջերմամեկուսիչ շերտի առկայություն, երեսպատվող քարերի համար լրացուցիչ կոնստրուկտիվ համակարգ, արտաքին պատի արտաքին կողմից ամրացվող ջերմամեկուսիչ շերտ, ինչը կապահովի արտաքին պատերի ջերմային դիմադրության նորմատիվային պահանջները: Շենքի տանիքը նախատեսված է հարթ, չշահագործվող: Տանիքի համար նախատեսված շերտերը նույնպես նախատեսվում են բարձր ջերմային դիմադրության համար, որը կբարձրացնի շենքերի էներգաարդյունավետությունը:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի նախատեսված են բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժվելու անհրաժեշտ պայմաններ՝ գլխավոր մուտքին կից թեքահարթակ, վերելակներից մեկի օգտագործում՝ հենաշարժային խնդիրներով մարդկանց և սայլակների ազատ տեղաշարժի ապահովման համար:

Շնարարության և շահագործման փուլերում տարածքի մոտեցումները նախատեսվում է Հրաչյա Քոչարի փողոցից:

Նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի տեխնիկա-տնտեսական ցուցանիշներն են՝

- հողի ընդհանուր մակերես՝ 3544,3 քմ,
- կառուցապատման մակերես՝ 1628,18 քմ – 45,92 %;
- անջրանցիկ մակերես՝ 441,96 քմ – 12,5 %,
- կանաչապատման մակերես՝ 1474,16 քմ, 41,58 %,
- բնակարանների քանակ՝ 233,
- ստորգետնյա յուրաքանչյուր հարկի մակերես՝ 2238,8քմ,
- ավտոկայանատեղի՝ 184:

Բնակելի շենքի ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ցանցին, ջրամատակարարումը կիրականացվի տարածքով անցնող D=150 մմ ջրատարից, ջրահեռացումը կիրականացվի միանալով Հր. Քոչարի փողոցով անցնող D=800 մմ կոյուղատարին, հեղեղատարը կմիանա նույն փողոցով անցնող D=700մմ հեղեղատարին:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի, որի համար լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ: Էլեկտրամատակարարումը նախատեսվում է իրականացնել կառուցվելիք ենթակայանից, որի համար -1 հարկում կհատկացվի 90 քմ տարածք:

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ եւ այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ և կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր եւ այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար:





Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով, աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն՝ տեղադրելով բիոզուգարաններ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը կիրականացվի համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս, կտնկվեն ծառեր և թփեր:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա բացասական ազդեցությունները և ռիսկերը կապված կլինեն շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի, բետոնային աշխատանքների հետ, աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կլինեն՝ շինարարության փուլում փոշին և շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ վառելիքի արտանետումները(CO, NOx):

Շինարարության կազմակերպման և շինարարական աշխատանքների ժամանակ նախատեսվում է շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային, ջրային ռսուրսների, մթնոլորտային օդի) պահպանության համար բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնցից են՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում ջրցանի իրականացում, տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ,
- շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխում փակ ծածկով մեքենաներով, սորուն նյութերի ժամանակավոր պահեստների ծածկում համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը հնարավորինս կկանխարգելի փոշու տարածումը,
- շինարարության ընթացքում շենքերի արտաքին մասի ծածկում անթափանց թաղանթով,
- ջրցանի ծավալների այնպիսի հաշվարկվում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և ջուրը կբավականացնի միայն փոշենստեցման համար,
- հոսքաջրերի հեռացում պարզարան, մեխանիկական նստեցում, նստվածքի հեռացում,
- շինարարական գործընթացներում շինարարական տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով այդ տարածքներում սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակի ապահովում, ժամանակակից տեխնիկական միջոցների օգտագործում,
- շինարարական տեխնիկայի վառելիքի լիցքավորում և յուղում շինհրապարակից դուրս՝ լցակայաններում կամ մասնագիտացված սպասարկման կետերում,
- աշխատանքների ավարտից հետո բոլոր տարածքների մաքրում և առաջացած շինարարական թափոնների տեղափում ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր և այլն:

Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ նախատեսված միջոցառումների իրականացմամբ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:





Նախատեսվող գործունեությունը ջրային ռեսուրսների աղտոտվածություն կամ հնարավոր ազդեցություն չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ՝ ուղղված հնարավոր բացասական ազդեցությունների նվազեցմանը:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակների( հրդեհի առաջացում, հեղուկ նյութերի արտահոսք, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն), այդ թվում նաև աղմուկի և թրթռումների հնարավոր ազդեցության բացառման, նվազեցման, կենսաբազմազանության պահպանման համար ևս նախատեսվում են մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք նկարագրված են հայտի համապատասխան բաժիններում:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնատեսակները կլինեն կենցաղային աղբը՝ 20.16 տ, որը կհավաքվի տեղադրված աղբահավաք կոնտեյներներում, մոտ 180 խմ շինարարական աղբը, որն ամբողջությամբ կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Շահագործման փուլում տրանսֆորմատորային ենթակայանում առաջացող հատկությունը կորցրած բանեցված յուղերը կհավաքվեն մետաղյա տարողությունների մեջ և կհանձնվեն նշված թափոնների վերամշակմամբ զբաղվող ընկերություններին:

Կանաչապատման աշխատանքները կիրականացվեն Կառավարության 2018թ. փետրվարի 8-ի N108-Ն որոշման համապատասխան՝ համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը կներկայացվի Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության համաձայնեցմանը: Տարածքում նախատեսվում է տնկել գնդաձև ակացիա՝ 4 հատ, ուռենի բաբելոնական՝ 2 հատ, թույա՝ 2 հատ, գնդաձև թույա՝ 4 հատ, յասաման՝ 4 հատ, վարդեր գետնատարած՝ 10 հատ, բոցենի՝ 30 հատ, վաղենակ՝ 24 հատ, սոխածաղիկ՝ 300 հատ: Նախատեսվող կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ բուսահողի՝ մոտ 150 խմ ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցնելով Երևանի քաղաքապետարանի հետ:

Կանաչապատ տարածքների ներքին ոռոգման ցանցը նախատեսվում է կաթիլային, հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից:

Նախատեսված բնապահպանական բոլոր միջոցառումները ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսված է իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցության կանխարգելմանը, մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումներ՝ մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամիսը մեկ անգամ հաճախականությամբ, տարածքի ջրցանում փոշենստեցման նպատակով՝ տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ, օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով՝ հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ, աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ: Նորատունկ կանաչ գոտու վիճակի մշտադիտարկումներ, որի ընթացքում կաչողականություն չապահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով:





Շինարարության ընթացքում մշտադիտարկումների և բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է հատկացնել 3120000 ՀՀ դրամ:

**Պարճառարանական մաս.** ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հանրային ծանուցումը և քննարկումներն իրականացվել են Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի նստավայրում:

Հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Գնահտաման հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ: Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ: Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ:

### Փորձաքննական պահանջներ

1. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:
3. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինադրի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:
4. Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N781-Ն որոշման պահանջներով:
4. Կանաչապատումն անհրաժեշտ է իրականացնել տարածաշրջանի և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ:





Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան: Տարածքի կանաչապատման աշխատանքներն իրականացնել Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված՝ հաստատված «Բարեկարգման, արդիականացման և կանաչապատման» նախագծի:

5. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:

## ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«ԲԱՐԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿ» ՍՊԸ կողմից ներկայացված Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Հր. Քոչարի փողոց 139 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

A handwritten signature in blue ink, likely belonging to the head specialist mentioned in the text.

Նելլի Նասիբյան